վանքի և վիճակի առաջնորդ։ Իբրև առաջնորդ նրա անունը հիշատակված է 1011 թվականին այժմյան Սանահին գյուղի արեվելյան ծայրին կանգնեցրած «Թեփակիր» կոչվող խաչքարի արձանագրության մեջ՝ Լսեայ ձևով (արձ. 171)։

Եսայի առաջնորդի գործունեության մասին միայն գիտենք, որ նա 32 տարուց ավելի ղեկավարել է Տաշիրքի եպիսկոպոսական վիճակն ու Սանահնի վանքը։

Արձանագրություններից նկատելի է, որ Սանահնում վանքի առաջնորդն ու վիճակի



Նկ. 20. Գրիգոր Տուտեորդու խաչքարը Սանահնում։

եպիսկոպոսը միշտ էլ միևնույն անձն է եղել, և վանքն իր ներքին գործերը ղեկավարելու համար առանձին վանահայր չի ունեցել։ Այդ պատճառով արձանագրությունների մեջ հայր կամ առաջնորդ միշտ միևնույն իմաստն են ունեցել և գործածվել են առանց խտրության։

Սանահնի պատմության համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում երկու մեծ ջահերը, որոնք վանքին է նվիրել Կյուրիկյան թագավորության հիմնադիր Կյուրիկեն կամ Գուրգեն առաջինը։

Այդ ջահերից մեկը, որ ունեցել է 112